ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑԵՐՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հովսեփ Բեդևյան
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ

Ապացուցման բեռի բաշխման հիմնախնդիրները վարչական դատավարությունում ունեն թե՛ տեսական և թե՛ գործնական կարևոր նշանակություն, որոնց ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է արդար դատաքննության իրավունքի գործառական տարրերն ապահովող կառուցակարգերի տարողունակության բացահայտման դիտանկյունից[1]: Հարկ է նշել, որ ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունները վարչական դատավարությունում առավելապես պայմանավորված են հայցատեսակներով, որոնք ոչ միայն կանխորոշում են ապացուցման պարտականություն սահմանելու սկզբունքները, այլև ընդգծված տարբերակում են մտցնում ապացուցմանն ուղղված դատավարական գործողությունների շրջանակի մեջ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 67-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել, որ ընդունվի այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Պարտավորեցման հայցը ներառում է վերը նշված միջամտող վարչական ակտը վարչական մարմնի կողմից վիճարկելու պահանջը:

Պարտավորեցման հայցով դիմելով դատարան՝ անձը կարող է պահանջել պարտավորեցնել վարչական մարմնին ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է: Ըստ այդմ, պարտավորեցման հայց ներկայացնելու համար պարտադիր նախապայման է բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտավորեցման հայցը, բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի, իրավունքի ուժով ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից[2]:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ նշված կառուցակարգը գործում է այն դեպքում, երբ հայցվորը ներկայացրել է պարտավորեցման հայցատեսակ, ուստի այն ներառում է նաև վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջը: Այսինքն՝ պարտավորեցման հայցատեսակը ներառում է նաև վիճարկման պահանջ, ընդ որում, անկախ նրանից՝ հայցվորը ներկայացրել է նմանաբնույթ պահանջ, թե ոչ: Այլ կերպ ասած՝ վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մեր-

1 Տե՛ս **Де Сальвиа М.** Прецеденты Европейского Суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002 гг., էջ 73-74, 76-78, 463-466:

2 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշումը և թիվ ՎԴ/2191/05/16 վարչական գործով 20.06.2017 թ. որոշումը:

ժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջն օրենքի ուժով ներառված է պարտավորեցման հայցապահանջի մեջ[1]:

Նշված որոշումներից հետևում է, որ պարտավորեցման հայցապահանջում մշտապես առկա է ոչ ինքնուրույն վիճարկման հայց, և այս դեպքում պարտադիր պայման չէ, որ պարտավորեցման հայցի հետ միաժամանակ ներկայացվի նաև դրա հիմքում դրված միջամտող վարչական ակտի վիճարկման առանձին պահանջ:

Պարտավորեցման հայցով ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություններին անդրադառնալուց առաջ կարևոր է պարզել, թե որն է պարտավորեցման հայցով ապացուցման առարկան:

Յուրաքանչյուր հայցի քննության ընթացքում օրենսդիրը դատարանից պահանջում է պարզել դատավարության մասնակիցների իրավունքները և պարտականությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ընդունած վարչական ակտերի, գործողությունների (անգործության) իրավաչափությունը հաստատող կամ հերքող, դատարան ներկայացված պահանջների, շահագրգիռ անձանց առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերը: Ըստ այդմ, ապացուցման առարկան այն իրավաբանական փաստերի համակցությունն է, որոնք էական նշանակություն ունեն գործն ըստ էության լուծելու համար և ենթակա են պարզման դատական քննության ընթացքում[2]:

Դատարանի կողմից պարզման ենթակա ապացուցման առարկայի մեջ ներառվում են ինչպես նյութական բնույթի, այնպես էլ դատավարական նշանակություն ունեցող իրավաբանական և ապացուցողական փաստերը[3]:

Նյութական իրավաբանական փաստերն ապացուցման առարկայի մեջ մտնող այն հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են տվյալ իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը, կամ որոնք արգելում են համապատասխան իրավունքների և պարտականությունների առաջացումը: Նշված փաստերի պարզումն անհրաժեշտ է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմը (նորմերը) ճիշտ կիրառելու և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար:

Ապացուցողական փաստերն օգտագործվում են այն դեպքերում, երբ ձեռք բերված փաստական տվյալները հնարավորություն չեն տալիս կոնկրետ եզրակացության հանգելու գործի հանգամանքների վերաբերյալ: Ապացուցողական փաստերից յուրաքանչյուրն առանձին վերցրած չի կարող հաստատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի գոյությունը: Այդ փաստերի և գործով ձեռք բերված մյուս ապացույցների համակցությունը թույլ է տալիս դատարանին հանգելու նման եզրակացության: Ապացուցողական փաստերը մի կողմից ենթակա են ստուգման, իսկ մյուս կողմից հանդես են գալիս որպես ապացուցողական միջոցներ:

Ապացուցողական փաստերը, փաստորեն, անուղղակի ապացույցներ են, որոնք դատավարության ընթացքում կարող են առաջ քաշվել, հերքվել և այլն: Մինչդեռ ապացուցման առարկայի մեջ մտնող իրավաբանական փաստերը, այսինքն՝ հայցվորի պահանջների և պատասխանողի առարկությունների հիմքում ընկած հանգամանքները դատավարության ընթացքում անփոփոխ են, մինչև որ հայցվորը չփոփոխի հայցի, իսկ պատասխանողը՝ առարկությունների հիմքերը:

---

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7479/05/16/ վարչական գործով 13.03.2019 թ. որոշումը:

[2] Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.,** Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 2003, էջ 323:

[3] Տե՛ս **Դանիելյան Գ.**, Վարչական վարույթ և դատավարություն (ուսումնական ձեռնարկ), Եր. Տ. Մեծ, 2015, էջ 187-188:

Անդրադառնալով բուն պարտավորեցման հայցին՝ կարող ենք եզրակացնել, որ դրանով ապացուցման առարկա են դառնում իրավաբանական և ապացուցողական այն փաստերը, որոնք նշանակություն ունեն հայցվող վարչական ակտի իրավաչափությունը պարզելու հարցում: Ընդ որում, Օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումների համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պարտավորեցման հայցի առանձնահատկություններին, արձանագրել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է, և եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին՝ ընդունել այդ վարչական ակտը:

Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով և ձեռք բերված ապացույցների շրջանակում, և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելն ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել Օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի և 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի կարգավորումները՝ միաժամանակ նշելով, որ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությամբ է պայմանավորված վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը և ոչ թե հակառակը: Մյուս կողմից, օրենսդիրը, կարևորելով հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության պարզումը, պարտավորեցման հայցի մերժումը ևս պայմանավորել է հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությամբ: Այսինքն՝ եթե ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա չի հաստատվում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, պարտավորեցման հայցը ենթակա է մերժման, և այս դեպքում վարչական դատարանը չի անդրադառնում վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշմանը[1]:

Վերը նշված դիրքորոշումներով առաջնորդվելու դեպքում ստացվում է, որ պարտավորեցման հայցի և՛ բավարարումը, և՛ մերժումը պայմանավորված են բացառապես հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության պարզմամբ, և այն դեպքում, երբ դատարանը օրենքով սահմանված կարգով հաստատի հայցվող բարենպաստ ակտի իրավաչափությունը, ապա պարտավորեցման հայցը պետք է բավարարի, հետևապես՝ օրենքի ուժով պետք է վերացնի նաև հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ վարչական ակ-

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշումը:

տը: Իսկ երբ դատարանը օրենքով սահմանված կարգով չհաստատի հայցվող բարենպաստ ակտի իրավաչափությունը, ապա պարտավորեցման հայցը պետք է մերժվի, սակայն այս դեպքում արդեն նույնիսկ բավարար հիմքերի, ապացույցների առկայության պայմաններում դատարանն իրավասու չի լինելու վերացնել հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ վարչական ակտը:

Պարտավորեցման հայցը մերժելու, սակայն ոչ իրավաչափ վարչական ակտը դատարանի կողմից չվերացնելու իրավիճակում պրակտիկայում խնդիրներ են առաջանում հատկապես ապացուցման բեռը բաշխելու կանոնների հետ կապված, քանի որ Օրենսգրքի 29-րդ հոդվածով նախատեսված է, որ պարտավորեցման հայցով ապացուցման բեռը կրում է **հայցվոր** ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ այն փաստերի մասով, որոնցով հիմնավորվում է իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը, իսկ **վարչական մարմինը**՝ հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի մասով, մինչդեռ նույն հոդվածով սահմանվում է, որ վիճարկման հայցով ապացուցման բեռը կրում է **բացառապես վարչական մարմինը**, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

Բացի այդ, օրենսդիրը սահմանել է, որ վիճարկման հայցի քննության ընթացքում վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող՝ նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով (ՎԴՕ 124-րդ հոդ. 2-րդ մաս), մինչդեռ պարտավորեցման հայցի քննության ընթացքում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա (ՎԴՕ 124-րդ հոդ. 3-րդ մաս):

Այսինքն՝ եթե վիճարկման հայցով ապացուցման բեռը կրում է **բացառապես վարչական մարմինը**՝ միջամտող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստերի մասով, ապա պարտավորեցման հայցով ապացուցման բեռը կրում է **ինչպես հայցվոր** ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ այն փաստերի մասով, որոնցով հիմնավորվում է իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը, այնպես էլ **վարչական մարմինը**՝ հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի մասով:

Ընդ որում, եթե վիճարկման հայցը քննելիս և դատական ակտ կայացնելիս դատարանը պետք է առաջնորդվի այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակով և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենսդրական կարգավորումներով, ապա պարտավորեցման հայց քննելիս դատարանի առջև դրված խնդիրն ավելի է բարդանում: Այսպես, պարտավորեցման հայցի քննության ընթացքում դատարանը պետք է Օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերի նաև այնպիսի ապացույցներ, որոնք տվյալ հայցի հիմքում դրված դիմումի մերժման վարույթում թեև առկա չեն եղել, սակայն գործի փաստական հանգամանքները պարզելու և գործը ճիշտ լուծելու համար կարող են էական նշանակություն ունենալ: Այնուհետև, դատական ակտի կայացման պահի դրությամբ ձեռք բերված համապատասխան ապացույցների և դատական ակտի կայացման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա դատարանը պետք է գնահատի հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը:

Անդրադառնալով պարտավորեցման հայցով ապացուցման բեռի բաշխմանը՝ նախ հարկ է նշել, որ Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի կարգա-

վորումների համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Ընդ որում, վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Իսկ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ է ձեռնարկում համարժեք միջոցներ:

Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, ամրագրել է կողմի պարտականությունը՝ դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Միևնույն ժամանակ, օրենսդիրն ամրագրել է նաև ապացույցներ ներկայացնելու հատուկ կանոն, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները՝ ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը[1]:

Ապացուցման ողջ գործընթացում որոշիչ դեր ունի հատկապես ապացուցման բեռի բաշխման կանոնները ճիշտ սահմանելը, այսինքն՝ թե կոնկրետ գործի քննության ընթացքում դատավարության որ կողմի վրա է դրվելու ապացուցման պարտականությունը, քանի որ, ապացույցներ ներկայացնելու պարտականության ընդհանուր և հատուկ կանոնները սահմանելուց բացի, Օրենսգրքի համապատասխան նորմերով սահմանվել են ապացուցման բեռը բաշխելու կանոնները, ինչպես նաև այն բացասական հետևանքները, որոնք վրա են հասնում ապացուցման բեռը կրող կողմի վրա դրված պարտականությունը չիրականացնելու դեպքում:

Այսպես, Օրենսգրքի 29-րդ հոդ. 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Միաժամանակ օրենսդիրը սահմանել է, որ կողմերն իրավունք չունեն ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետազոտումը և գնահատումը՝ անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ ձեռք բերելը: Նման դեպքում դատարանը կարող է ապացուցման բեռը դնել խոչընդոտող կողմի վրա՝ անկախ օրենսգրքով սահմանված ապացուցման բեռը կրելու կանոններից (ՎԴՕ 29-րդ հոդ. 3-րդ մաս):

Այսպես, վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդիրը դիտարկում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որի չիրականացման պարագայում կարող են վրա հասնել որոշակի անբարենպաստ հետևանքներ: Վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2680/05/15 վարչական գործով 27.12.2017 թվականի որոշումը:

բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել չապացուցված: Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ, գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, որը պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները[1]:

Անդրադառնալով զուտ պարտավորեցման հայցով ապացուցման բեռի բաշխման կանոններին՝ հարկ է նշել, որ Օրենսգրքի 29-րդ հոդ. 2-րդ մասի 2-րդ կետի կարգավորումների համաձայն՝ պարտավորեցման հայցով ապացուցման բեռը կրում է՝

-վարչական մարմինը՝ հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի մասով,

-ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ այն փաստերի մասով, որոնցով հիմնավորվում է իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը:

Այսինքն՝ օրենսդրի սահմանած կանոնի համաձայն՝ պարտավորեցման հայցի քննության շրջանակներում ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պետք է ապացուցեն իրենց կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացող այն փաստերի հիմնավորվածությունը, որոնց հիման վրա միայն դատարանը հնարավորություն կունենա հաստատել հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը:

Սակայն նշված կանոնը կիրառելիս գործնականում առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ հայցվոր ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրենց վրա դրված ապացուցման բեռը կրելու պարտականությունը չեն կարողանում կատարել ոչ թե անգործություն դրսևորելու, այլ անհնարինության կամ իրենց կամքից անկախ պատճառներով, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել պարտավորեցման հայցի մերժման: Նման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, այն դեպքերում, երբ հայցվորի պահանջը հիմնավորող ապացույցները պետք է ձեռք բերվեն միայն վարչական վարութի ընթացքում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր նմանատիպ դեպքերում պարտավորեցման հայցը որպես կանոն պետք է մերժվի:

Հատկապես նման իրավիճակ կստեղծվի այն դեպքերում, երբ օրենքով սահմանված են հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու մի շարք հիմքեր, որոնցից ոչ բոլորին է վարչական մարմինն անդրադարձել հայցվող ակտի ընդունումը մերժելիս, և հայցվորին այնքան էլ հեշտ չի լինի ապացուցել մերժման մյուս բոլոր հիմքերից յուրաքանչյուրի բացակայության փաստը, մանավանդ որ վարչական մարմինը դրանց վերաբերյալ վարույթ չի իրականացրել և որևէ դիրքորոշում չի հայտնել:

Ինչ վերաբերում է վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականությանը, ապա օրենսդրի սահմանած կանոնի համաձայն՝ նույն պար-

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2680/05/15 վարչական գործով 27.12.2017 թվականի որոշումը:

տավորեցման հայցի քննության շրջանակներում վարչական մարմինը պետք է ապացուցի վարչական ակտի ընդունումը մերժելու համար հիմք հանդիսացած փաստերի հիմնավորվածությունը: Մինչդեռ գործնականում առաջանում են իրավիճակներ, որ նույնիսկ այն դեպքում, երբ վարչական մարմինը չի կարողանում ապացուցել իր մերժման հիմնավորվածությունը, միևնույնն է, դատարանը չի վերացնում նույնիսկ ակնհայտ ոչ իրավաչափ մերժումը, եթե հայցվորը չի կարողանում ապացուցել իր պահանջի հիմնավորվածությունը, այսինքն՝ եթե պարտավորեցման հայցը ենթակա է մերժման:

Ըստ այդմ կստացվի, որ պարտավորեցման հայցը մերժվելու յուրաքանչյուր դեպքում վարչական մարմնի կողմից՝ իր վրա դրված ապացուցման բեռը կրելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը չի առաջացնի որևէ իրավական հետևանք, ինչն էլ կհանգեցնի այն իրողությանը, որ նշված հայցատեսակով վարչական մարմնի համար հայցվող ակտի ընդունումը մերժելու հիմք դարձած փաստերի մասով ապացուցման բեռը կրելու պարտականություն սահմանելն ինքնանպատակ է:

Ինչպես արդեն նշվեց, Օրենսգրքի համապատասխան նորմերով սահմանվել են ինչպես ապացուցման բեռը բաշխելու կանոնները, այնպես էլ այն բացասական հետևանքները, որոնք վրա են հասնում ապացուցման պարտականությունը չիրականացնելու դեպքում (ՎԴՕ 29-րդ հոդ.):

Պարտավորեցման հայցով ապացուցման բեռի բաշխման կանոններին համապատասխան՝ դատավարության մասնակիցների՝ իրենց վրա դրված պարտականությունների կատարման արդյունքում վրա հասնող հետևանքները դատական պրակտիկայում կարող են առաջացնել հետևյալ խնդրահարույց իրավիճակները.

Իրավիճակ 1. Պրակտիկայում բազմաթիվ են այն դեպքերը, երբ սկզբնական հայցով ներկայացվում է միաժամանակ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու որոշումը վերացնելու և հայցվող բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջներ, սակայն դատարանը, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումներով (26.12.2016թ. թիվ ՎԴ/6495/05/14 և 13.03.2019թ. թիվ ՎԴ/7479/05/16/ վարչական գործերով) արտահայտած դիրքորոշումները, նախնական դատական նիստի ընթացքում հայցվորին մատնանշում է, որ հայցվող ակտի ընդունումը մերժելու որոշումը վերացնելու առանձին պահանջ ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պարտավորեցման հայցն արդեն իսկ օրենքի ուժով ներառում է այդպիսի պահանջ: Դատարանի մատնանշմամբ հայցվորը փոխում է հայցի առարկան, հրաժարվում է առանձին վիճարկման հայց առաջադրելու պահանջից՝ ներկայացնելով միայն բարենպաստ վարչական ակտն ընդունելուն պարտավորեցնելու պահանջ: Մինչդեռ այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում դատարանն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերում այնպիսի ապացույցներ, որոնցով թեև չի հաստատվում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, սակայն այդպիսիք բավարար են հայցվող ակտի ընդունումը մերժելու որոշումը վերացնելու համար, միևնույնն է, դատարանն արդեն իրավասու չի լինում անդրադառնալ դրա իրավաչափությանը և վերացնել այն՝ պատճառաբանելով, որ բացակայում է դատարանի վարույթում քննվող ակտի վիճարկման ինքնուրույն պահանջ:

Իրավիճակ 2. Պրակտիկայում բազմաթիվ են իրավիճակները, երբ հայցվող բարենպաստ ակտի ընդունումը վարչական մարմինը մերժում է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող հատուկ օրենքով սահմանված մի շարք հիմքերից միայն մեկով: Այս դեպքերում պարտավորեցման հայցի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով վարչական մարմինը պետք է հիմնավորի դիմումը տվյալ հիմքով մերժելու իրավաչափությունը, մինչդեռ, դրան զուգահեռ, հայցվորը, կրելով իր վրա դրված ապացուցման պարտականությունը, պետք է ապացուցի հայցվող բարենպաստ ակտը մերժելու՝ օրենքով նախատեսված մյուս բոլոր հիմքերի բացա-

կայությունը, այսինքն՝ հայցվորը, կրելով ապացուցման բեռը՝ իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը հիմնավորող փաստերի մասով, դատարանին պետք է ներկայացնի այնպիսի ապացույցներ, որոնցով կհիմնավորվի/կհաստատվի հայցվող բարենպաստ ակտի իրավաչափությունը:

Մինչդեռ գործնականում ստացվում է, որ հայցվորը, իր համար բարենպաստ հանգամանքների մասով կրելով ապացուցման բեռը, պետք է ապացուցի, որ վարչական մարմինն իրավասու չի եղել մերժելու հայցվող բարենպաստ ակտի ընդունումը օրենքով նախատեսված մյուս բոլոր հիմքերի բացակայության պատճառով. այս դեպքում արդեն խոսքը վերաբերում է մերժման այն բոլոր հիմքերին, որոնց վարչական մարմինը նույնիսկ չի էլ անդրադարձել: Այսինքն՝ այս դեպքերում հայցվող ակտն ընդունելու համար բարենպաստ հանգամանքների ապացուցման ամբողջ բեռը պետք է կրի միայն հայցվորը, և բացառապես հայցվորի ներկայացրած ապացույցներով պայմանավորվի հայցվող վարչական ակտի իրավաչափությունը դատարանի կողմից հաստատելու և ըստ այդմ էլ հայցը բավարարելու հնարավորությունը, ինչը, սակայն, այս դեպքերում անթույլատրելի է, քանի որ, ինչպես արդեն նշվեց, օրենքով նախատեսված են մերժման մի շարք հիմքեր, վարչական մարմինը հայցվող վարչական ակտի ընդունումը մերժել է նշված հիմքից միայն մեկով՝ չանդրադառնալով մյուսներին, իսկ գործի քննության ընթացում դատարանը պարզել է, որ տվյալ հիմքը հայցվորի նկատմամբ կիրառվել է ոչ իրավաչափորեն:

Իրավիճակ 3. Պրակտիկայում շատ հաճախ պարտավորեցման հայց է ներկայացվում այն դեպքում, երբ անձը հայցվող բարենպաստ ակտ ընդունելու պահանջով դիմել է վարչական մարմնին, սակայն վերջինս անձի դիմումը մերժել է ոչ թե դիմումի ըստ էության քննության արդյունքում, այլ նման դիմում ներկայացնելու չափանիշներին չբավարարելու պատճառով: Նման մերժում ունենալով՝ անձը դիմում է դատարան հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը պարտավորեցնող պահանջով:

Նշված իրավիճակում, նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը, կրելով ապացուցման բեռը իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը հիմնավորող փաստերի մասով, ներկայացնում է անհրաժեշտ բոլոր ապացույցները, դատարանը մերժում է պարտավորեցման հայցը՝ պատճառաբանելով, որ իրավասու չէ անդրադառնալ հայցվող բարենպաստ ակտի իրավաչափությանը և հայցը բավարարել, քանի որ տվյալ դեպքում դատարանն ըստ էության պետք է հանդես գա վարչական մարմնի դերում և կատարի այն գործառույթը, որը վերջինս ըստ էության չի կատարել:

Միաժամանակ հարկ է նշել, որ պրակտիկայում տարածված այս իրավիճակն առանձնանում է նրանով, որ այս դեպքերում անձը չի կարող ներկայացնել Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն գործողության կատարման հայցը, որով հնարավոր է պահանջել տրամադրել ակտն ընդունված համարելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, քանի որ այս դեպքում վարչական մարմինը չի դրսևորել այնպիսի անգործություն, որը կարող է օրենքի ուժով հանգեցնել հայցվող ակտն ընդունված համարելուն, այլ ընդհակառակը՝ այս դեպքում վարչական մարմինը մերժել է անձի դիմումի հիման վրա վարչական վարույթի հարուցումը:

Բացի այդ, նման դեպքում հնարավոր չէ ներկայացնել նաև Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողություն կատարելուն պարտավորեցնելու հայցը, որով հայցվորը կարող է պահանջել՝ կատարելու որոշակի գործողություններ, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը, քանի որ նման դեպքերում հայցվորը վարչական մարմնին ներկայացրած դիմումով պահանջում է ոչ թե գործողության կատարում, այլ վարչական ակտի ընդունում:

Փաստորեն, այս դեպքերում առկա է բարենպաստ վարչական ակտ ընդունելու պահանջով դիմում, որն ընդհարապես վարչական մարմնի կողմից քննարկման ա-

ռարկա չի դարձվել, այլ կայացվել է ներկայացված դիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտ, այսինքն՝ դիմումով ներկայացված պահանջի իրավաչափությունը վարչական մարմինն ընդհանրապես չի քննել, այլ անդրադարձել է միայն նման պահանջը վարչական մարմնին ներկայացնելու դիմումատուի իրավունք ունենալու կամ չունենալու հարցին:

Վերը նշված 2-րդ և 3-րդ իրավիճակների հետ կապված՝ պրակտիկայում կան տեսակետներ, որ այդ դեպքերում պետք է կիրառվի բացառման կանխավարկածի ինստիտուտը, այսինքն՝ դատարանները պետք է արտահայտեն դիրքորոշում, որ եթե հայցվող բարենպաստ վարչական ակտը մերժվել է մեկ հիմքով, ապա պետք է ելնել այն կանխավարկածից, որ մերժման մյուս բոլոր հիմքերը վարչական մարմնի կողմից ստուգվել են, և եթե մերժման որոշման մեջ նշված չեն, ուրեմն դրանք բացակայում են:

Կարծում ենք, որ նման մոտեցումը թեպետ կհեշտացնի դատարանի աշխատանքը, սակայն այն ճիշտ չէ և չի բխում վարչական դատավարության օրենսգրքից, ըստ որի՝ դատարանի կողմից վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու վերաբերյալ դատական ակտ կայացնելու համար պետք է հաստատվի, որ հայցվող վարչական ակտն ընդունելու համար առկա են փաստական և իրավական բավարար հիմքեր, և հայցվող վարչական ակտը համապատասխանում է դատական ակտի կայացնման պահի դրությամբ գործող կոնկրետ իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ առկա են հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության բոլոր պայմանները: Հետևապես դատարանն իրավասու չէ պարտավորեցնել վարչական մարմնին՝ ընդունելու այնպիսի վարչական ակտ, որը դատական ակտի կայացման պահին լինի ոչ իրավաչափ, կամ որի ընդունման համար անհրաժեշտ փաստական հիմքերը հաստատված չեն գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներով: Իսկ բացառման կանխավարկածի ինստիտուտի կիրառմամբ հնարավոր են դեպքեր, երբ դատարանի պարտավորեցման վճռի հիման վրա ընդունվեն ոչ իրավաչափ վարչական ակտեր:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ պարտավորեցման հայցի քննության ընթացքում դատարանը պետք է Օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերի նաև այնպիսի ապացույցներ, որոնք տվյալ հայցի հիմքում դրված դիմումի մերժման վարույթում թեև առկա չեն եղել, սակայն գործի փաստական հանգամանքները պարզելու և գործը ճիշտ լուծելու համար կարող են էական նշանակություն ունենալ: Ընդ որում, դատարանը պետք է գնահատի հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը՝ այդպիսի ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա: Ըստ այդմ, դատարանն իրավասու չէ պարտավորեցնել վարչական մարմնին ընդունելու այնպիսի վարչական ակտ, որը դատական ակտի կայացման պահին համարվում է ոչ իրավաչափ, կամ որի ընդունման համար անհրաժեշտ փաստական հիմքերը հաստատված չեն գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներով:

Ընդ որում, պարտավորեցման հայցը բավարարելու անհնարինության յուրաքանչյուր դեպքերում դատարանն այնուամենայնիվ պետք է անդրադառնա հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշման իրավաչափությանը՝ նման հայցապահանջի առկայության դեպքում, և դրա ոչ իրավաչափ լինելը հաստատվելու դեպքում պետք է հնարավորություն ունենա վերացնել այն:

Պարտավորեցման հայցով ապացուցման բեռի բաշխման կանոններին համապատասխան՝ դատավարության մասնակիցների կողմից իրենց վրա դրված պարտականությունների կատարման (ոչ պատշաճ կատարման կամ կատարման անհնարինության) արդյունքում վրա հասնող հետևանքների կապակցությամբ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Այն դեպքում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրենց վրա դրված ապացուցման բեռը կրելու պարտականությունը չեն կատարում ոչ թե անգործություն դրսևորելու հետևանքով, այլ անհնարինության կամ իրենց կամքից անկախ պատճառներով, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել պարտավորեցման հայցի մերժման, ապա այս դեպքերում, կարծում ենք, դատարանը պետք է գործի ի պաշտոնե, չսահմանափակվի ապացուցման բեռը կրելու պարտականությունը, ինչպես նաև այն չկատարելու պատճառով վրա հասնող բացասական հետևանքները միայն հայցվոր կողմի վրա թողնելով, քանի որ այս դեպքերում միշտ չէ, որ հայցվորը կարող է պատշաճ կատարել իր վրա դրված ապացուցման բեռը կրելու պարտականությունը և դատարան ներկայացնել հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը հիմնավորող բոլոր անհրաժեշտ ապացույցները՝ հաշվի առնելով այն, որ այդպիսի ապացույցները կարող են ձեռք բերվել միայն վարչական մարմնի կողմից վարչական վարույթ իրականացնելիս, և որոնց առկայության կամ բացակայության դեպքում միայն դատարանը կարող է որոշել համապատասխան փաստերի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված մոտեցումը հատկապես անհրաժեշտ է կիրառել, երբ պարտավորեցման հայցի քննության ընթացքում պարզվում է, որ տվյալ դեպքում օրենքով նախատեսված են հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու մի շարք հիմքեր, վարչական մարմինը հայցվող վարչական ակտի ընդունումը մերժել է նշված հիմքից միայն մեկով՝ չանդրադառնալով մյուսներին, սակայն գործի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով դատարանը պարզում է, որ տվյալ հիմքը հայցվորի նկատմամբ կիրառվել է ոչ իրավաչափորեն, այսինքն՝ վարչական մարմինն իրավասու չի եղել հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժել՝ օրենքով նախատեսված հենց այդ հիմքով:

Հետևաբար, հաշվի առնելով այն, որ այս իրավիճակում դատարանը պարտավոր է անդրադառնալ օրենքով սահմանված մերժման մյուս բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության փաստին, կարծում ենք՝ օրենքով սահմանված մերժման մյուս հիմքերից յուրաքանչյուրի **բացակայությունն** ապացուցելու պարտականությունը հայցվորի վրա դրված լինելուց բացի, միաժամանակ՝ մերժման բոլոր հիմքերի **առկայությունն** ապացուցելու պարտականությունը դատարանի կողմից պետք է դրվի վարչական մարմնի վրա, կամ դատարանը ի պաշտոնե քննության սկզբունքի կիրառմամբ պետք է պարզի դա:

2. Ինչ վերաբերում է վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականությանը, ապա այն դեպքում, երբ պարտավորեցման հայցի քննության ընթացքում վարչական մարմինը, կրելով իր վրա դրված ապացուցման բեռը, չկարողանա ապացուցել իր մերժման հիմնավորվածությունը, կարծում ենք՝ դատարանը պետք է հնարավորություն ունենա վերացնել ոչ իրավաչափ մերժումը նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը չկարողանա ապացուցել իր պահանջի հիմնավորվածությունը, և պարտավորեցման հայցը ենթակա լինի մերժման:

Նշված մոտեցումը պայմանավորվում է նրանով, որ պարտավորեցման հայցը մերժվելու յուրաքանչյուր դեպքում վարչական մարմնի կողմից՝ իր վրա դրված ապացուցման բեռը կրելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնի որոշակի իրավական հետևանքներ, և չհանգեցնի այն իրողությանը, որ նշված հայցատեսակով վարչական մարմնի համար՝ հայցվող ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի մասով ապացուցման բեռը կրելու պարտականություն սահմանելն ինքնանպատակ լինի, և չձևավորվի այնպիսի սովորույթ, երբ վարչական մարմինը կարող է անգործություն ցուցաբերել իր վրա դրված դատավարական պարտականությունը կատարելու հարցում, և նման անգործությունը թողնվի անհետևանք հենց դատարանի կողմից:

Բացի այդ՝ նշված մոտեցումը հնարավոր է կիրառել նաև այն դեպքերում, երբ պարտավորեցման հայցի քննության ընթացքում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների հետևանքով այլևս անհնարին դառնա հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը, քանի որ այս դեպքում հնարավոր են իրավիճակներ, երբ հաստատվի, որ վարչական մարմնին դիմելու պահին գործող օրենքների հիման վրա վարչական մարմինը պետք է ընդուներ հայցվող բարենպաստ վարչական ակտը, որը, սակայն, չի ընդունել, որի պատճառով էլ անձը մտադիր է դիմել վարչական մարմնին՝ պահանջելով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

ПРОБЛЕМЫ РАСПРЕДЕЛЕНИЯ ГРУЗА ДОКАЗЫВАНИЯ ПО ИСКАМ ОБЯЗЫВАНИЯ В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Овсеп Бедевян
Председатель Апелляционного административного суда РА

Требование о принудительном иске может быть удовлетворено лишь в случае, когда в результате собранных в ходе разбирательства доказательств будет потверждено, что отсутствуют все предусмотренные законом основания для отказа в принятии благоприятного административного акта. А в каждом случае невозможности удовлетворения принудительного иска суд, тем не менее, должен затронуть вопрос правомерности решения об отказе в принятии требуемого административного акта, а в случае, если будет установлена неправомерность подобного решения, суд должен иметь возможность аннулуровать данный административный акт.

В связи с проблемой распределения бремени доказательства в ходе рассмотрения принудительного иска необходимо учитывать, что в случае, когда физическое или юридическое лицо не выполняет возложенную на него обязанность по бремени доказывания не в силу бездействия, а в силу невозможности или по независимым от него причинам, суд обязан действовать ex officio, не ограничиваться тем, чтобы оставить всю обязнность по предоставлению доказательной базы и возможные негативные последствия на истца, учитывая, что доказательная база может быть приобретена только в ходе административного процесса со стороны административного органа, либо находиться непосредственно у административного органа, В случае, когда административный орган отказал в принятии благоприятного административного акта лишь на основании одного пункта и не рассматривал остальные законные основания, то в этом случае обязанность в предоставлении доказательной базы, а также возможные негативные последствия должны нести равно как истец, так и ответчик (административный орган).

PROBLEMS OF DISTRIBUTION OF CARGO EVIDENCE ON CLAIMS OBLIGATIONS IN ADMINISTRATIVE PROCEEDINGS

Hovsep Bedevyan
Chairman of the Administrative Court of Appeal of the RA

The request under the obligation claim shall be satisfied only if the evidences obtained in the case establish that there are no grounds provided by the law for rejecting the adoption of the requested favorable administrative act.

And in any case of impossibility to satisfy the obligation claim, the court should nevertheless refer to the lawfulness of the decision rejecting the requested administrative act, if such a claim exists, and if it is found to be unlawful the court should be able to eliminate it.

In relation to the issue of distribution of the burden of proof of obligation claim, it should be noted that in case when individuals or legal entities do not act their responsibility of carrying the burden of proof, not because of inactivity, but for reasons of impossibility or independent of their will, then in these cases, the court should act ex officio, not limit the responsibility of carrying the burden of proof, as well as leaving the negative consequences of failing only on the plaintiff, as in such cases the plaintiff may not always be able properly act the responsibility of carrying the burden of proof and submit to the court all the evidences necessary to support the adoption of the requested favorable administrative act, taking into consideration that such evidence can only be obtained during the administrative proceeding acted by the administrative body or they may be just within the jurisdiction of the administrative body.

In cases, the administrative body has rejected the adoption of the requested favorable administrative act on the bases of one ground without referring to the other grounds provided by the law, then in such cases the responsibility to prove the lawfulness of the favorable administrative act established and thereby to reject it, to prove the existence or absence of all other grounds provided for by the law, as well as the negative consequences of not presenting it, must be borne by both the plaintiff and the administrative body.

Բանալի բառեր- *պարտավորեցման հայց, հայցվող վարչական ակտ, ապացուցման բեռ*
Ключевые слова- *принудительный иск, бремя доказательства, требуемый административный акт*
Key words - *obligation claim, requested administrative act, burden of proof*